ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆԻՆ

Պարոն Ուլիխանյան,

Տեղկացնում եմ Ձեզ, որ իրավունքի ուժով Ազգային ժողովում 22.10.2021թ. ստեղծվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով:

Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի առաջին օրից «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից նախաձեռնվել է «Մենք ենք, մեր սահմանները» խորագրով համազգային դրամահավաք-արշավ, որի արդյունքում հավաքագրված միջոցներից 52,703,113.3952 հազ. ՀՀ դրամ գումար փոխանցվել է պետական բյուջե:

Քննիչ հանձնաժողովի խնդիրն է իրականացնել ուսումնասիրություն և ներկայացնել զեկույց նշված միջոցներով ֆինանսավորված կոնկրետ ծախսերի ու միջոցառումների, ինչպես նաև ծախսման փաստացի ուղղությունների և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրական նպատակներին և նվիրաբերության պայմանագրին համապատասխանության վերաբերյալ:

Նկատի առնելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրական կարգավորումները, հանձնաժողովի 30.11.2021թ. նիստում քննարկվեց և հավանության արժանացավ առաջարկը դիմել Պետական վերահսկողական ծառայությանը հետևյալ հարցով: Արդյոք ծառայությունը առ այսօր իրականացրե՞լ է վերահսկողություն նշված թեմայով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

02.12.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

Ե/1521-21 **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**

13 Դեկտեմբերի, 2021թ.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մինասյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 080/5634-2021 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը Ձեր կողմից նշված մասով «Հայաստան» համահայկական հիմնադրամում վերահսկողական գործառույթներ չի իրականացրել:

Recoverable Signature

ՀԱՐԳԱՆՔՈՎ X **ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

Կատարող՝	*Սեդրակ Ղազարյան*
Ստորաբաժանում՝	*Իրավական ապահովման և օրինականության վերահսկողության վարչություն*
Հեռ՝՝	*010-31-31-79*